Արձանագրություն N 3

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի

25.11.2019թ. նիստի

Օրակարգով

1. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
2. Անգլերենի թիվ 1 և 2 ամբիոնների վարիչների՝ բ.գ.թ., պրոֆ. Մ.Ապրեսյանի և բ.գ.դ., պրոֆ. Ե.Երզնկյանի տարեկան հաշվետվություն:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 26-ը:

Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը շնորհավորեց Անգլիական բանասիրության ամբիոնի բ.գ.թ.,դոցենտ Ն.Երնջակյանին անգնահատելի վաստակի և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ՝շնորհելով նրան ԵՊՀ ոսկե մեդալ :

ԼՍԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ.Ապրեսյանի տարեկան հաշվետվությունը: Մ.Ապրեսյանը նշեց, որ ամբիոնը բացի ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում իրականացվող անգլերեն լեզվի դասընթացներից ամեն տարի անց է կացնում TOEFL (ibt) դասընթացներ և քննություններ, ինչպես նաև իրականացրել է ITEP քննություն՝ անգլերենի իմացության միջազգային վկայագրի տրամադրմամբ: Ամբիոնում ավելացել է դոցենտների թիվը /2/: Դասախոսները մասնակցել են

ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային գիտաժողովների: Ամբիոնը մասնակցել է նաև Yerevan Expo ցուցահանդեսին: Ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմը պարբերաբար անցնում է որակավորման համապատասխան դասընթացներ: Հրատարակվել են 5 դասագիրք, 3 ուսումնական ձեռնարկ, 1 մենագրություն, 5 հոդված, 4 թեզիս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվետվությունը գնահատել դրական:

ԼՍԵՑԻՆ՝

Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե.Երզնկյանի հաշվետվությունը: Ե.Երզնկյանը նշեց, որ ամբիոնը ապահովում է անգլերենի դասավանդում ԵՊՀ մի շարք հումանիտար ֆակուլտետներում: ԵՊՀ 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի լույսի ներքո ստեղծվել են «Օտար լեզու 1», «Օտար լեզու 2», մագիստրոսական ծրագրերը: Սակայն հարկ է նշել՝ «Օտար լեզու 2» դասընթացին հատկացված ժամաքանակը խիստ անբավարար է: Վերանայվել են նաև բակալավրի ուսումնական ծրագրերը՝ հաշվի առնելով այն փաստը, որ 2019-2020 ուս. տարվանից օտար լեզվի ժամաքանակը նվազեցվել է և ուսումնասիրվելու է մեկ տարի որպես պարտադիր դասընթաց: Ամբիոնի դասախոսները կիրառում են նախատեսված MOODLE համակարգը: Մասնակցել են Պերուջիայի համալսարանի կողմից կազմակերպված, ինչպես նաև Ջենովա քաղաքում կայացած միջազգային գիտաժողովին: Ամբիոնի դասախոսները արդյունավետ գիտահետազոտական

գործունեություն են ծավալում: Ամբիոնն ունի 5 հայցորդ, պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունը գնահատել դրական:

Ընթացիկ հարցեր

- Առաջարկ արվեց ստեղծել էթիկայի հանձնաժողով:

Գիտխորհրդի նախագահ և դեկան, բ.գ.թ.,դոց.՝ Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար բ.գ.թ., դոց.՝ Մ.Դալալյան

25 .11. 2019 թ .